

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 փետրվարի 2014 թվականի N 133-Ա

ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրի 1-ին կետով սահմանված կարգի 121-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներով՝

1. «Հյուսիսային միջանցքի արդիականացման ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև գտնվող Բագրատաշենի սահմանային հսկողության անցակետի տարածքում նոր կամրջի կառուցման վերաբերյալ» միջկառավարական համաձայնագրի շուրջ Վրաստանի կառավարության հետ բանակցություններ վարելու նպատակով ստեղծել բանակցային խումբ և հաստատել բանակցային խմբի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Լիազորել բանակցային խմբի ղեկավար Գագիկ Բեգլարյանին ստորագրելու բանակցությունների արդյունքներով կազմված արձանագրությունը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

S. Սարգսյան

2014 թ. փետրվարի 24
Երևան

Հավելված
ՀՀ վարչապետի 2014 թ.
փետրվարի 24-ի N 133-Ա
դրոշման

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԽՄԲԻ

- Գ. Բեգլարյան - Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարար (բանակցային խմբի ղեկավար)
- Հ. Թովմասյան - Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար
- Շ. Քոչարյան - Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ
- Կ. Մինասյան - Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
- Վ. Միրումյան - Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ
- Ա. Սարգսյան - Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» պետական ոչ առևտրային կազմակերպության գլխավոր գործադիր տնօրեն

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Վ. Գաբրիելյան